հում, իսկ դմուզ խմելը բոլորովին մոռացվել էր։ Զարմանալի արագությամբ Անդրկովկասում թաթարները ձիաբուծությունից անցան խոշոր և մանր անասունների բուծման, որի համար ավելի նպաստավոր էին մեր ստորադիր դաշտերը և բարձրադիր լեռնային արոտավայրերը։ Սնալով միշտ foշlor անասնապահ՝ թուրք տարրը իր տնտեսության ծանրությունը տեղափոխել է ձիուց խոշոր և մանր անասուններին, որի արտադրանքը՝ միսը, մորթին, կաթը մշակում է և գործ է ածում ըստ տեղական եղանակների։ Ի միջի այլոց յայնորեն տարածվել է մածուն մերելը, կարագ հարելը, պանիր պատրաստելը և կովի ու ոչխարի կաթի բազմազան գործածությունը, որտեղ տեղական ձևերը բացառապես հաղթող են հանդիսացել։ Բրդի օգտագործման եղանակներն էլ ձևափոխվել են ըստ տեղական տեխնիկայի և fէշայի կողքին ավելի ընդարձակ տեղ է գրավել գորգը, կարպետը և նրանց հարակից գործվածքները։ Ամբողջապես փոփոխության է ենթարկվել՝ զբաղմունքի բնույթի փոփոխության առնչությամբ՝ զգեստը. ոտքից գլուխ թուրքը թողել է իր չոր տափաստանին հատուկ զգեստը և փոխ է առել տեղական զգեստը, նրա նյութը, բաղկացուցիչ առանձին մասերը՝ շուխան, արխալուղը, շալվարը, փարթամ փափախը, տրէխը-շարոխը և այլն։

Թե տնտեսական, տեխնիկական գործիքներն ու ամանները և թե՛ զգեստը նա հարմարեցրել է իր գերազանցորեն foշlor տնտեսության պահանջներին։ Նրա խնոցին կաշվե թուլուղն է, կարասների տեղ գերադասվում են կաշուց շինած պարկերն ու մորթուց շինած տիկէրը, կավեղենը փոխարինված է մեծ մասամբ պղնձեղենով, օրինակ՝ կավե կուժը՝ պղնձե գուգումով։ Դեռ վերջնականապես չհրաժարվելով վրաններից և չփոխարինելով դրանք տնային հաստատուն շենքերով՝ իր մշտական բնակարանի համար նա օգտագործում է տեղական ղարադամի ձևը, որը սակայն մեծ մասամբ կառուցում է հայ արհեստավորների ձեռքով։ Արհեստներից ավելի զարգացել է փալանդուզ-ությունը՝ ձիու, էշի համեմատ պատրաստելը, որը այնպես նրան անհրաժեշտ էր foշlor կյանքում, մանավանդ ղշլաղնէրից՝ ձմեռանոցներից յայլաղնէրը՝ լեռնային արոտավայրերը տեղափոխվելիս։

Թրքական ամբողջ ժողովրդական բանահյուսությունը Զանգեզուրումն էլ ներծծված է հարևան ժողովրդի սիրած մոտիվներով և եղանակներով։ Մահմեդական աշխարհի և խանական-բեկական պարսկասեր ճաշակին ենթարկվելով՝ այդ ամենն իր վրա կրում է, ինչպես և տեղական հայերի մեջ, իրանական բանավոր գրականության և արվեստի ուժեղ ազդեցությունը։ Ժողովրդական հավատալիքներով թուրքի մերձեցումը տեղական միջավայրին արտահայտվում է նրանով, որ թուրքերն էլ հայի հետ նույն սրբավայրերին են ուխտ գնում, նրանցից են սպասում թե՛ իր մուրազների կատարումը, թե՛ իր և իր անասունի առողջության և երկարակեցության ապահովումը։ Ցուրացնելով տեղական մագիկ եղանակները՝ թուրք տարրն ավելացրել է իր հայրենիքից բերած կախարդելու հմտությունը՝ «կանայք նոցա կախարդ էին և զամենայն ինչ հմայէին, և առանց հրամանի կախարդացն և դիւիցն ոչ երթային մի ճանապարհ ուրեք, բայց թէ նոքա հրամայէին»։ Այս հմտությունը նոր միջավայրի մեջ անցել է առանձնապես մոլլաներին։ Նրա գործադրությունը տալիս էր վերջիններին և՛ հայ, և՛ թուրք հասարակությունից ստացվող խոշոր եկամուտ և թե մեծ ազդեցություն հասարակայնության մեջ։